ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/28

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.01.2022թ. թիվ 26/26-1/1268-2022 գրությամբ «Տումոե» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 18.01.2022թ. թիվ ՍՄ//1164-2022 գրության հիման վրա, 25.01.2022թ. թիվ 26/26-1/1268-2022 գրությամբ նախաձեռնել է «Տումոե» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Տումոե» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Տումոե» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Տումոե» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/28 ընթացակարգի շրջանակներում 02.02.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.01.2022թ. թիվ ՍՄ//1164-2022 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված «Վարդենիս նյարդահոգեբանական տուն ինետրնատ» պետական ոչ առևտրային կազմակերպության 2022 թվականի սննդամթերքի կարիքների բավարարման նպատակով ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Վ-2, ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Վ-3 ծածկագրերով գնման ընթացակարգերի շրջանակներում «Տումոե» ՍՊԸ-ն հայտ էր ներկայացրել: Մասնակցի կողմից ներկայացվել է թերի հայտ, հավելված 1-ում ոչ հավաստի լրացված տվյալներ, բացակայում էր էլեկտրոնային ստորագրությունը, ծածկագիրը սխալ էր նշված, բացակայում էր իրական շահառուների մասին հայտարարությունը, նկարագիր դաշտերում չէր լրացված ոչ մի տվյալ: Առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թվականի N 526-Ն որոշման 41-րդ կետով, տրվել է շտկման հնարավորություն: Մասնակցի կողմից շտկում չի կատարվել սահմանված ժամկետում:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թվականի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները, առաջարկում եմ նախաձեռնել «Տումոե» ՍՊԸ-ին գնումներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/28 ընթացակարգի շրջանակներում 02.02.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/28 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/28 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Վ-2» և «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Վ-3» ծածկագրերով էլեկտրոնային աճուրդներ (հետայսու նաև՝ Ընթացակարգեր), որոնց մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Տումոե» ՍՊԸ-ն:

2. «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Վ-2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 11.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ հակադարձ աճուրդը սկսվել է 13.12.2021թ.:

2.1 Նույն արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Տումոե» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը թերի է՝ դիմում հայտարարության մեջ մեջ նշված տվյալները հավաստի չեն, էլեկտրոնային ստորագրություն առկա չէ, իրական շահառուների մասին հայտարարագիրը առկա չէ, ինչպես նաև նկարագիր դաշտը լրացված չէ: Մասնակիցներին տրամադրվել է շտկման հնարավորություն:

2.2 Նույն արձանագրության 5-րդ կետի 5.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ«Տումոե» ՍՊԸ-ի կողմից շտկում չի կատարվել և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

3. «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Վ-3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 12.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ հակադարձ աճուրդը սկսվել է 21.12.2021թ.:

3.1. Նույն արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Տումոե» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը թերի է՝ դիմում հայտարարության մեջ մեջ նշված տվյալները հավաստի չեն, էլեկտրոնային ստորագրություն առկա չէ, իրական շահառուների մասին հայտարարագիրը առկա չէ, ինչպես նաև նկարագիր դաշտը լրացված չէ: Մասնակիցներին տրամադրվել է շտկման հնարավորություն:

3.2. Նույն արձանագրության 5-րդ կետի 5.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ«Տումոե» ՍՊԸ-ի կողմից շտկում չի կատարվել և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

4. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, 18.01.2022թ. թիվ ՍՄ//1164-2022 գրությամբ, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացրել է լիազորված մարմնին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.01.2022թ. թիվ 26/26-1/1268-2022 գրությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 18.01.2022թ. թիվ ՍՄ//1164-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե ***հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ***, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Վ-2» և «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Վ-3» ծածկագրերով էլեկտրոնային աճուրդներ, որոնց մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Տումոե» ՍՊԸ-ն:

«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Վ-2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 11.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ հակադարձ աճուրդը սկսվել է 13.12.2021թ.:

Նույն արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Տումոե» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը թերի է՝ դիմում հայտարարության մեջ մեջ նշված տվյալները հավաստի չեն, էլեկտրոնային ստորագրություն առկա չէ, իրական շահառուների մասին հայտարարագիրը առկա չէ, ինչպես նաև նկարագիր դաշտը լրացված չէ: Մասնակիցներին տրամադրվել է շտկման հնարավորություն:

Նույն արձանագրության 5-րդ կետի 5.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ«Տումոե» ՍՊԸ-ի կողմից շտկում չի կատարվել և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Վ-3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 12.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ հակադարձ աճուրդը սկսվել է 21.12.2021թ.:

Նույն արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Տումոե» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը թերի է՝ դիմում հայտարարության մեջ մեջ նշված տվյալները հավաստի չեն, էլեկտրոնային ստորագրություն առկա չէ, իրական շահառուների մասին

հայտարարագիրը առկա չէ, ինչպես նաև նկարագիր դաշտը լրացված չէ: Մասնակիցներին տրամադրվել է շտկման հնարավորություն:

Նույն արձանագրության 5-րդ կետի 5.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ«Տումոե» ՍՊԸ-ի կողմից շտկում չի կատարվել և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, 18.01.2022թ. թիվ ՍՄ//1164-2022 գրությամբ, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացրել է լիազորված մարմնին:

Այսպիսով՝ Ընթացակարգերի հրավերների 1-ին մասի 8-րդ կետի 8.2, 8.9 և 8.11 ենթակետերի համաձայն՝

8.2***. Էլեկտրոնային աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2021.12.13. 09:30-ին (ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Վ-2), 2021.12.21. 09:30-ին (ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Վ-3):*** Եթե աճուրդը սկսելու օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա աճուրդը սկսվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա նույն ժամին: Աճուրդ չի կարող կազմակերպվել ոչ աշխատանքային օրերին կամ աշխատանքային օրվա ժամը 16:00-ից հետո:

8.9 ***Աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը հրավիրվում է գնահատող հանձնաժողովի նիստ, որի ընթացքում՝***

1) ***գնահատվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերի՝ սույն հրավերին պահանջներին համապատասխանության հանգամանքը***.

2) մերժվում են մյուս մասնակիցների հայտերը:

Եթե աճուրդն ամփոփվելու պահին մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի համար գնման հայտով սահմանված գինը, գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգը օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը յոթանասունհինգը չգերազանցելու դեպքում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատումն

իրականացվում է գնահատող հանձնաժողովի հրավիրված նիստժը սկսելու օրվանից հաշված տաս, իսկ գերազանցելու դեպքում՝ տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8.11 ***<u>Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում,</u>*** ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը <u>նույն օրը</u> դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը***: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոգրյալ փաստական հանգամանքների, մասնավորապես՝ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Վ-2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 11.01.2022թ. նիստի թիվ 2 և «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Վ-3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 12.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրությունների ուսումնասիրության և կիրառման ենթակա իրավական նորմերի համադրման արդյունքում՝ հարկ եմ համարում արձանագրել, ***հնարավոր չէ փաստել, թե Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների կողմից «Տումոե» ՍՊԸ-ի ներկայացրած հայտերի՝ Ընթացակարգի հրավերին պահանջներին անհամապատասխանության արձանագրման, Ընկերությանը Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում ծանուցելու, ինչպես նաև արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ մեկ աշխատանքային օր տրամադրելու և անհամապատասխանությունը չշտկելու հիմքով Ընկերության հայտերը մերժելու վերաբերյալ որոշումները երբ են կայացվել, որպիսի պայմաններում հնարավոր կլիներ արձանագրել Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների գործողությունների իրավաչափությունը, ինչպես նաև որպես հետևանք Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալը, որի հիման վրա էլ Պատվիրատուն, հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթը, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացրել է լիազորված մարմնին:***

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և գործողությունների ժամանակին իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում՝ Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ, որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական

ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայումս գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Վերոգրյալ իրավական նորմերի և սույն գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ դեպքում հնարավոր չէ արձանագրել՝ արդյո՞ք Պատվիրատուի կողմից պահպանվել է Կարգի 45-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթը, այն է՝ հինգ աշխատանքային օր ժամկետը, քանի որ, ինչպես արդեն վերը նշվեց, պարզ չէ, թե ե՞րբ են Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների կողմից կայացվել որոշումներ՝ Ընկերության հայտերը մերժելու վերաբերյալ:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի

կարող վրա հասնել և հանգեցնել «Տումոե» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.01.2022թ. թիվ 26/26-1/1268-2022 գրությամբ «Տումոե» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**